

## Հ Ր Ա Մ Ա Ն N 251-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«09» ՀՈՒՆԻՍԻ 2015 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՆՆԴԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՃԱՇԱՑՈՒՑԱԿԻ, ՍՆՆԴԻ ՊԱՀԵՍՏԻՑ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՑԱՆԿԻ ԵՎ ՍՆՆԴԻ ՔԱՆԱԿԻ ՈՒ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N ՔՀ-60-Ն ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով.**

#### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրվող սննդամթերքը ձևակերպելու և համապատասխան հսկողություն իրականացնելու նպատակով՝ հաստատել.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդի հատկացման ճաշացուցակի, սննդի պահեստից օրական դուրս գրվող սննդամթերքի ցանկի և սննդի քանակի և որակի հսկողության կարգն ու ձևերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդի հատկացման

ճաշացուցակի, սննդի պահեստից դուրս գրման կաթսայի օրդերի և սննդի հսկողության «Ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողության մատյանի» ձևերը հաստատելու մասին» թիվ ՔՀ-60-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:



**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

## Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ ԵՎ  
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏՐՎՈՂ ՄՆՆԴԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՃԱՇԱՑՈՒՑԱԿԻ, ՄՆՆԴԻ  
ՊԱՀԵՍՏԻՑ ՕՐԱԿԱՆ ԴՈՒՐՍ ԳՐՎՈՂՍ ՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՑԱՆԿԻ ԵՎ ՄՆՆԴԻ ՔԱՆԱԿԻ ՈՒ  
ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդի հատկացման ճաշացուցակի, սննդի պահեստից օրական դուրս գրվող սննդամթերքի ցանկի կազմման և սննդի քանակի ու որակի հսկողության կարգը և ձևերը:

2. Յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կողմից կազմվում է հաջորդ շաբաթվա ճաշացուցակ (ձև 1)՝ ապահովելով ճաշատեսակների բազմազանությունը: Ճաշացուցակը ստուգվում և ստորագրվում է քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի պետի, ճաշարանի վարիչի և բժշկական սպասարկման ստորաբաժանման պետի կողմից և ներկայացվում քրեակատարողական հիմնարկի պետի հաստատմանը: Քրեակատարողական հիմնարկում պահվող դատապարտյալները և կալանավորված անձինք տեղեկացվում են ճաշացուցակի մասին:

3. Ճաշացուցակում նշվում են մեկ անձին հասանելիք կաթսա լցվող սննդամթերքի օրական չափաբաժինը և ճաշատեսակների անվանումներն ըստ օրերի և օրակարգի:

4. Յուրաքանչյուր աշխատանքային օր քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կողմից կազմվում է սննդի պահեստից հաջորդ օրվա համար դուրս գրվող անհրաժեշտ սննդամթերքի ցանկ (ձև 2), որը ստորագրվում է քրեակատարողական հիմնարկի պետի, ֆինանսական բաժնի պետի, տնտեսական ապահովման բաժնի պետի և

հաշվապահի կողմից, ինչպես նաև կազմվում է տեղեկանք, որը ստորագրվում է պահեստապետի և ճաշարանի վարիչի կողմից:

5. Դատապարտյալներին և կալանավորված անձանց անհրաժեշտ սննդամթերքի ցանկում նշվում է անձանց այն թվաքանակը, ովքեր նշված օրը պետք է ապահովվեն սննդով, սննդամթերքի անվանումը, չափաբաժինները, գումարը, ինչպես նաև հղի կանանց, կերակրող մայրերերին, անչափահասներին կամ կալանավորված հիվանդ անձանց տրվող հավելյալ չափաբաժինները:

6. Նախքան դատապարտյալներին և կալանավորված անձանց անհրաժեշտ սննդամթերքի ցանկ կազմելը քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանման համապատասխան աշխատակիցը կամ հիմնարկի պետի կողմից այդ աշխատանքների կատարման համար հանձնարարություն ստացած աշխատակիցը գրավոր ձևով պարզում է կալանավորված անձանց և դատապարտյալների այն թվաքանակը, ովքեր չեն օգտվելու քրեակատարողական հիմնարկի տվյալ օրվա ճաշացանկից՝ կազմելով համապատասխան ցուցակ (ձև 3): Ցուցակը ներկայացվում է տնտեսական ապահովման բաժնի պետին:

7. Ոչ աշխատանքային օրերի համար սննդի պահեստից օրական դուրս գրվող դատապարտյալներին և կալանավորված անձանց անհրաժեշտ սննդամթերքի ցանկը կազմվում է վերջին աշխատանքային օրը:

8. Դատապարտյալներին և կալանավորված անձանց անհրաժեշտ սննդամթերքի ցանկում նշված սննդամթերքը պահեստից ստանալուց հետո այդ մասին համապատասխան գրառում են կատարում պահեստապետը և ճաշարանի վարիչը:

9. Դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդի հսկողության համար քրեակատարողական հիմնարկում վարվում է «Ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողության մատյան» (ձև 4), որում նշվում է ճաշատեսակների անվանումը, օրակարգը և ամսաթիվը:

10. Ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողությունն իրականացնում են օրվա պատասխանատու հերթապահին ու բժիշկը, ովքեր, ստուգելով ճաշի քանակը և որակը, տալիս են համապատասխան եզրակացություն:



ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՑԱՆԿ ԹԻՎ \_\_\_\_

Դատապարտյալների և կալանավորված անձանց թվաքանակը, ովքեր պետք է  
ապահովվեն սննդով 20 թվականի «\_\_\_\_\_» «\_\_\_»-ին \_\_\_\_\_ մարդ

Հ/Հ	Սննդի չափաբաժինը, անձերի քանակը և սննդամթերքի պահանջը	Չափաբաժին		Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող հավելյալ չափաբաժիններ		Ընդամենը	
		մարդ		մարդ			
		չափաբաժինը	քանակը	չափաբաժինը	քանակը		
1.							
2.							
3.							
4.							
5.							
6.							
7.							
8.							
9.							
10.							
11.							
12.							
13.							
14.							

Հիմնարկի պետ \_\_\_\_\_ Ֆինանսական բաժնի պետ \_\_\_\_\_ -

Տնտ. ապահովման բաժնի պետ \_\_\_\_\_

Հաշվապահ \_\_\_\_\_

ՏԵՂԵԿԱՆՔ

Սննդի օրական փաստացի արժեքը \_\_\_\_\_ դրամ

Կ.Տ \_\_\_\_\_ բաց թողեց պահեստապետ \_\_\_\_\_

Սննդամթերքը ստացա ամբողջությամբ

Ճաշարանի վարիչ \_\_\_\_\_

ՑՈՒՑԱԿ

Կալանավորված անձանց և (կամ) դատապարտյալների, ովքեր չեն օգտվելու քրեակատարողական հիմնարկի հաջորդ օրվա ճաշացանկից

h/h	Անուն, ազգանուն	Ամսաթիվ	Օրակարգ	Ստորագրություն

Կազմեց՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն

անուն, ազգանուն, պաշտոն

«    » \_\_\_\_\_ 20 թ.

Ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողության մատյան

Օր, ամիս շաբաթվա օրը	Օրակարգ	Ճաշատեսակի անվանումը	Հերթապահ խմբի պատասխանատու հերթապահի և բժշկի եզրակացությունը	Հերթապահ խմբի պատասխանատու հերթապահի ստորագրությունը	Բժշկի ստորագրությունը
Երկուշաբթի	Նախաճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ընթրիք		Համապատասխանում է քանակին և որակին		
Երեքշաբթի	Նախաճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ընթրիք		Համապատասխանում է քանակին և որակին		
Չորեքշաբթի	Նախաճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ընթրիք		Համապատասխանում է քանակին և որակին		
Հինգշաբթի	Նախաճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ընթրիք		Համապատասխանում է քանակին և որակին		
Ուրբաթ	Նախաճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ընթրիք		Համապատասխանում է քանակին և որակին		
Շաբաթ	Նախաճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ընթրիք		Համապատասխանում է քանակին և որակին		
Կիրակի	Նախաճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ճաշ		Համապատասխանում է քանակին և որակին		
	Ընթրիք		Համապատասխանում է քանակին և որակին		

«Ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողության մատյանը»  
 բաղկացած է 30 թերթից: Թերթերը երկկողմանի փակագրված են վերը նշված ձևով:  
 Մեկ մատյանը նախատեսված է մեկ փարվա համար: